ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 16 » հոկտեմբերի 2019 թվականի N: 495-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԿԱՔԱՎԱՍԱՐԻ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 12-Ի N282-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 32-րդ և 46-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» 4-րդ կետի 2-րդ, 3-րդ, 4-րդ ենթակետերի, 7-րդ, 9-րդ, 11-րդ, 13-րդ, 15-րդ, 17-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ

համայնքի ղեկավարի 2019 թվականի հուլիսի 29-ի N211 գրությունը, մանկավարժական խորհրդի 2019 թվականի հուլիսի 15-ի նիստի թիվ 8 արձանագրությունը, ծնողական խորհրդի 2019 թվականի հուլիսի 15-ի նիստի թիվ 3 արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Ժամկետը լրանալու կապակցությամբ դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Կաքավասարի տարրական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Դպրոց) կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) անդամներ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Գագիկ Պետրոսյանի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Սուրեն Ավագյանի, Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Ռեբեկա Մանուկյանի, Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված Գարեգին Առաքելյանի լիազորությունները:

2. Խորհրդի անվանական կազմում երեք տարի ժամկետով հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Սարգիս Մելոյանին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Խաչատուր Հովհաննիսյանին, Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Ռեբեկա Մանուկյանին, Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված Անդրանիկ Գառնիկյանին:

3. Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի հուլիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Կաքավասարի տարրական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի անվանական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի N51-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N282-Ա որոշման հավելվածում «Պետրոսյան

Գագիկ», «Ավագյան Սուրեն», «Առաքելյան Գարեգին» բառերը համապատասխանաբար փոխարինել «Մելոյան Սարգիս», «Հովհաննիսյան Խաչատուր», «Գառնիկյան Անդրանիկ» բառերով:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝